DOI: 10.54503/1829-4324.2024.1-268

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ*

Լիանա Կառլենի Հարությունյան

Հոդվածը ստացվել է՝ 14.02.24, ուղարկվել է գրախոսման՝ 17.04.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

Ներածություն: Հատկապես XVII-XVIII դարում Հայաստանն ու հայերը հանդես էին գալիս որպես կարևոր օղակ Արևելքի և Արևմուտքի միջև՝ կապված Հայաստանի յուրահատուկ աշխարհագրական դիրքի ու նրա վրայով անցնող համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհների հետ: «Համաշխարհային շուկայում հայերի յայտնուելը, – ինչպես նկատում է Ն.Ադոնցը,– ժամանակակից քաղաքակրթութեան հիմքում ընկած նոր ոգու դժուարին փորձութիւնն է, որը մատնանշում է Հայաստանի կարեւորութիւնը որպէս նոր աշխարհի առաջացման գործօն՝ արտացոլուած Արեւելքի ու Արեւմուտքի փոխադարձ յարաբերութիւններում»[1]: Հենց այս դիտանկյունից էլ կարևորություն է ներկայացնում Վ.Բայբուրդյանի հայ վաճառականության գործունեության քննությունը Ռուսաստանում, Հնդկաստանում, Հեռավոր Արևելքի ու Հարավ –Արևելյան Ասիայի, ինչպես նաև Արևմտյան և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ **նպատակ** ունենալով ցույց տալու հայերի շոշափելի դերակատարությունը ոչ միայն համաշխարհային առևտրում, այլև «աշխարհի ժողովուրդների վարք ու բարքին առնչվող անչափ հետաքրքրական տեղեկությունների» տրամադրման առումով[2]: Ժողովուրդների երկխոսության ապահովան հենց նման պատմություններն էլ գլոբալացման արդի դարաշրջանում խնդիրը դարձնում են **արդիական**՝ նպաստելով հայկական ինքնության պահպանմանը:

Խնդիր է դրվել ներկայացնելու XVIIդ. –ի հայ վաճառականների գործունեությունը ինչպես տնտեսական, այնպես էլ մտածողության տեսանկյունից, վեր հանել նրանց դերը տարբեր «ժողովուրդների շփման ու փոխհարստացման տեսանկյունից»:

Գրականության վերլուծություն: Նշված ժամանակաշրջանում հայ վաճառականության գործունեությունը ուսումնասիրության առարկա է դարձել թե ներկայի և թե անցյալի տարբեր հեղինակների կողմից՝ Ի. Կանտ, Ջ. Բերշե,

---

* Սույն հոդվածի առաջին մասը տես՝ Հարությունյան Լ.,Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը, Սոցիալ–տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու– 2023, N1, էջ 365-377:

[1] Адонц Н., Из истории армянского вопроса, Научно-инфорационный бюллетень сектора Научной информации АН Армении, серия 3, Ереван, 1984, с.48.

[2] Այդ մասին տես նաև՝ Աղախանյան Հ.Հ, Հայ վաճառականության դերը առօրեական մտածողության զարգացման գործում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (128), Երևան 2009թ., էջ 108-121, Աղախանյան Հ.Հ, Հայ վաճառականության դերը ժողովուրդների շփման ու փոխհարստացման գործընթացում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (124), Երևան, 2008թ., էջ 176-185:

Ոսկան Երևանցի, Թովմա Վանանդեցի, Հովհաննես Անկյուրացի, Կոստանդ Զուղայեցի, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Ագուլեցին, Հ. Արթինեան, Լ. Չորմիսյան, Ն. Ադոնց, Ա. Հովհաննիսյան, Ս. Ասլանյան, Հր. Ղ. Միրզոյան, Հ. Հ. Աղախանյան և շատ ուրիշներ: Նշված հեղինակները շեշտադրում են այն մեծ հեղինակությունը, որ վայելում էին վերջիններս համաշխարհային առևտրում: Ֆրանսիացի պատմաբան Ֆ. Բրոդելը իր «Նյութական քաղաքակրթությունը, տնտեսությունն ու կապիտալիզմը XV-XVIII դդ» աշխատության մեջ անգամ մի առանձին ենթավերնագրով անդրադառնում է հայ վաճառականներին՝ ընդգծելով հայերի ունեցած դերը աշխարհի առևտրական քարտեզում[1]:

Մեթոդաբանություն: Որպես շարադրման սկզբունք ընտրվել է պատմաքննական վերլուծության մեթոդը:

Վերլուծություն: Արդեն XVI դարում Լևանտ–Արևելք առևտուրը հայ առևտրական–խոջայական դասի համար խիստ սահմանափակ էր, ինչը ստիպում էր նրանց Արևմուտքում փնտրելու ավելի լայն շուկաներ: Միջերկրածովյան երկրների տնտեսական աշխուժացումը անմիջականորեն իր արտացոլումը գտավ նաև հայ վաճառականների շրջանում: Վերականգնելով միջնադարյան հայ ծովային առևտրի ավանդությունները Միջերկրական ծովի ավազանում մեծանում էր հայ նավատերերի թիվը, որոնք Եվրոպա էին հասցնում արևելյան ապրանքների բազմապիսի տեսականի:

Եվրոպական հզոր առևտրական ընկերությունների հետ մրցակցության հաջողության գլխավոր գրավականներից մեկն այն էր, որ հայերը բավարարվում էին համեմատաբար ցածր շահույթներով, ինչը անընդունելի էր եվրոպական վաճառականների համար: Ընդօրինակելով եվրոպացիներին, նրանք միավորվում էին առևտրական ընկերությունների մեջ՝ մրցակցությանը ավելի հեշտությամբ դիմագրավելու համար, սովորում էին լեզուներ, բանկային ու վարկատվական փոխատվության ձևերը, ուսումնասիրում տեղական կենցաղն ու սովորույթները, ինչպես նաև կապեր հաստատում եվրոպական պետությունների կառավարող շրջանների հետ: Այսպես Շահրիմյանների ընտանիքի անդամները 1696 թ.– ին Հռոմի պապի կողմից ստացան Հռոմի քաղաքացու պատվավոր կոչում՝ դրանով իսկ օգտվելով Հռոմում և Անկոսայում ազատ առևտրի իրավունքներից: Ավստրիայի կայսրի կողմից Շահրիմյանների ընտանիքը ճանաչվեց որպես Ավստրիայի ազնվականության դասակից ու հավասար, ողջ գերդաստանին շնորհելով նաև կոմսության տիտղոս՝ տոհմական զինանշան ունենալու իրավունքով[*]: Նմանօրինակ ընտանիքներ քիչ չեն եղել: Պատահական չէ ֆրանսիացի Տուրնեֆորը նկատել, որ հայ վաճառականները «ոչ միայն հանդիսանում են Լևանտի առևտրի տերը, այլև նշանակալից չափով նաև Եվրոպայի առավել

---

[1] Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIIIвв., т.2, М., 2006.

[*] Հայտնի է, որ Մարգար Շահրիմանյանը 1693թ.– ին 200 հզ. դուկար գումարով փոխառություն է հատկացրել Վենետիկի հանրապետությանը թուրքերի դեմ պատերազմ մղելու համար:

խոշոր քաղաքների առևտրի տերը»[1]: Դա է վկայում նաև Վենետիկի արքունիկի արձանագրությունները առ այն, որ արժե միայն խրախուսել հայերի՝ որպես «բարյացապաշտ», «սիրելագույն», «օգտակար», «միշտ շահավոր» և «երախտավոր» ազգի առևտուրը՝ տրամադրելով նրանց ամենալայն արտոնությունները:

Անդրադառնալով խոշորագույն հայ վաճառականների ընտանիքներին Բայբուրդյանը մեջբերում է Ալիշանի վավերագրերի հիման վրա կազմված XVI-XVIII դարերում Վենետիկում առևտուր անող հայերի ցանկը, որոնց թվաքանակը անցնում էր 2000-ից: Վենետիկում եղել է անգամ «Ջուղայի փողոց», հայկական քարաշեն եկեղեցի՝ իր հյուրանոցներով և հարակից այլ շենքերով: Հետագայում Լիվոռնոն (Ջենովան) է դառնում հայ վաճառականության համար ձգողության կենտրոն, հաշվի առնելով զանազան արտոնությունները, որ տրամադրում էին Մեդիչիները: Հայ վաճառականները Իրանից, Հնդկաստանից, մերձավոր–արևելյան երկրներից Տոսկանա էին ներմուծում կտավներ, համեմունքներ, մետաքսեղեն, որդան կարմիր, թանկարժեք քարեր, մոմ, մարգարիտ և այլ բազապիսի ապրանքներ: 1697թ.–ի մարտի 18- ին Լիվոռնոյի հայերի կողմից ընդունվում է «Ազգային սահմանադրություն», որում գրված էր տվյալ գաղթօջախի ներքին կյանքին վերաբերող այլևայլ հարցերի, ինչպես նաև վճարվող տուրքերի չափերի մասին[2]: Թեև Բայբուրդյանը նշում է, որ նյութերի պակասը հնարավորություն չի տվել առանձին–առանձին ցույց տալու հայ վաճառականների առևտրական կապերը մի շարք քաղաքների հետ, ինչպես օրինակ՝ Հռոմ, Բոլոնիա, Պիզա, Ֆլորենցիա և այլն, սակայն հայտնի է որ բոլոր այդ քաղաքներում XVIIդ.— ում գոյություն են ունեցել հայ գաղթօջախներ:

XVII դարի սկզբին հայերը Ֆրանսիայում դարձել էին տեղի վաճառականների լուրջ մրցակից, ինչը վերջիններիս ստիպում էր պարբերաբար սահմանափակել հայերի գործունեությունը: Այնուհանդերձ հայերը հասան նրան, որ իրենց թույլատրվեց Ֆրանսիայի հարավային նավահանգիստներում բաց անել առևտրական տներ[3]: Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրատպությունը կարող է նպաստել հայ վաճառականների առևտրի աշխուժացմանը, Լյուդովիկոս XIV-ը, ի պատասխան Ոսկան Երևանցու «աղերսանց թղթի», ինչպես նաև Կոլբերի հովանավորությամբ Երևանցուն իրավունք շնորհեց Մարսելում, Լիոնում և տերության այլ քաղաքներում հիմնադրելու տպարան՝ հայերենով ամեն տեսակի գրքեր հրատարակելու իրավունքով:

Հայերը ոչ պակաս նշանակալի դեր են ունեցել նաև Ամստերդամում, որոնց գալստի մասին թվագրվում է դեռ 1560-65 թվականներին: Իսկ արդեն 1617 թ.– ից սկսած հայ վաճառականները Ամստերդամի քաղաքային բորսայում կատարում

---

[1] Ըստ Վ. Բայբուրդյանի, Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 127:

[2] Այդ մասին տես՝ Ուղուրլեան Մ. Վ., Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիւռնոյ քաղաքի, Վենետիկ, 1891, էջ 66-67:

[3] Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հատ Բ., Կահիրե, 1955, էջ 200:

էին խոշոր առևտրական գործարքներ: Ըստ որում հայ վաճառականության աշխարհագրությունը չէր սահմանափակվում միայն Ջուղայի վաճառականներով: Եվրոպական երկրներ էին գալիս հայ վաճառականներ Փոքր Ասիայից ու Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև Ղարաբաղից, Զանգեզուրից և այլ հայկական գյուղաքաղաքներից[1]: Հայ վաճառականները հոլանդացիների հետ կազմել են նաև փայատիրական սկզբունքների վրա հիմնված առևտրական ընկերություններ: Հոլանդիայում հայերի թվաքանակը այնքան էական է եղել, որ վերջիններս ունեցել են իրենց «Ազգային տունը»[2]: Զուտ հայկական առևտրական տների թիվը Ամստերդամում 1660-ական թթ–ին հասնում էր 60-ի[3]: Հոլանդացի պատմաբան Ռ. Ա. Բեկիուսը նկատում է, թե բորսայի պատերին այլ օտարազգի վաճառականների կողքին պատկերված էին նաև հայ վաճառականներ[4]: Հայերը ունեցել են նաև իրենց հատուկ շուկան «Արևելյան շուկա» անվանումով, զուտ հայկական առևտրական տներ: Ի տարբերություն հրեաների, որոնց մերժում էին «Ամստերդամի քաղաքացիության» իրավունքը, հայերին իսկույն շնորհում էին այդ կոչումը[5]:

Լայն էր հայ վաճառականների եվրոպական շուկա արտահանվող ապրանքների տեսականին: Մետաքսից զատ հայերը կարողանում էին Եվրոպա անցկացնել գորգեր, կաշվեղեն(մասնավորապես շագրենի), պիստակ, ոսկի, արծաթ, ծխախոտ, շաքար, մեղր, բրինձ, ինչպես նաև գոհարեղեն ու թանկարժեք քարեր: Եվրոպայից վերադառնալիս ջուղայեցի վաճառականների յուրաքանչյուր քարավան Իրան էր բերում 200 հազար արծաթ սկուդի: Ոսկյա և արծաթյա դրամները Իրանից նաև տեղափոխվում էին դեպի Հնդկաստան: Մեծ էր հայ վաճառականների դերը նաև, դեռևս Արևմուտքում անհայտ արևելյան սննդամթերքների, համեմունքների, դեղորայքի, օծանելիքների, սաթի, սնդիկի, զենքի և բազմապիսի այլ ապրանքների տարածման գործում: Այսպես Ժակլին Պիրեն նշում է, որ տեղեկություններ կան, որ սուրճի գործածությունը Եվրոպայում տարածել են առաջին հերթին հայ վաճառականները[6]:

Նշված ժամանակաշրջանում հայ վաճառականների դասային կազմը բաղկացած էր երեք կարգից՝ մանր վաճառականներ–խանութպաններ, որոնք երկրից դուրս չէին մեկնում և տեղում զբաղվում էին գործվածքեղենի և այլ ապրանքների վաճառքով, մեծածախ վաճառականներ, որոնք ապրանք էին

---

[1] Սարուխան Ա., Հոլանդիան և հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 41-42:

[2] Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 148:

[3] Очерки истории Италии, 476-1918 годы/ред. М.А.Гуковский, Москва, 1959, с. 251.

[4] Bekius R.A., “The Armenian Community in Amsterdam in the Seventeenth and Eighteenth Centuries: Integration and disintegration” Paper presented at the First conference of the Association International des Etudes arméniennes, Amsterdam, 1983, p. 6 (Մեջբերումը կատարված է ըստ՝ Bakhchinyan A., Regional Routes, regional roots? Cross-Border. Patterns of Human Mobility in Eurazia, Hokkaido Slavic-Eurasian Research Center, 2017, p.28.

[5] Սարուխան Ա., Հոլանդիան և հայերը ԺԶ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 147:

[6] Пирен Ж., Открытие Аравии, Пять веков путешествий и исследований, Москва, 1970, с.147.

հատկացնում խանութներին՝ իրենց հերթին դրանք ձեռք բերելով խոշոր վաճառականներից և երրորդը՝ միջազգային առևտրով զբաղվող խոշոր վաճառականներ՝ խոջաներ, որոնք առևտուր էին անում եվրոպական երկրների, Հնդկաստանի, Թուրքիայի, Արաբիայի, Աֆրիկայի և այլ երկրների հետ: Ուշագրավ է, որ 17-18 դդ.–ում սպիտակամորթ ժողովուրդներից Եթովպիա մտնելու իրավունք են ունեցել միայն հայերը և հույները: Այդ պատճառով այնտեղ գնացող գրեթե բոլոր եվրոպացիները հայկական կամ հունական տարազ են հագել և իրենց ձևացրել հայ կամ հույն[1]: Ռուս անվանի պատմաբան Բ. Տուրաևը իրավացիորեն նշում է, որ «հայերը դարեր շարունակ Հաբեշստանում (Եթովպիայում) հանդես են եկել իբրև աշխարհիկ և հոգևոր գործունեության ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչներ»[2]:

Հարկ է նկատել, որ հայ ժողովրդի պատմության մեջ խոջայական կապիտալի դերը չի սահմանափակվել լոկ առևտրով: Պատահական չէ Լեոն նկատում, թե «Վաճառականության հետ գաղթականության ճանապարհին մի–մի երևան էր գալիս նաև գրագետը, ուսման տենչով վառված հայը»[3], որոնք հենց ծառայում էին մտավոր գործին: 16-18-րդ դարերում Վենետիկում, Ամստերդամում, Մարսելում և եվրոպական այլ կենտրոններում նրանց ջանքերով լույս են տեսել կրոնական ու աշխարհիկ բնույթի բազմաթիվ գրքեր, աշխարհագրական քարտեզներ, տեղեկատուներ: «Լքելով վանքի և եկեղեցու մթնոլորտը՝ գիրքն ու գրագիտությունը սկսում են ընդգրկել աշխարհիկ ընթերցողին, հասարակության վերին ու միջին խավերը, և որոշ նախապայմաններ ստեղծում հայերի հետագայ ազգային–կուլտուրական էվոլյուցիայի համար»[4]: Այդուհանդերձ Բայբուրդյանի մի այլ դիտարկմամբ, նոր շուկաների մշտական փնտրտուքը հայ վաճառակա-նությանը հեռացրել էր հայրենիքից՝ դրանով իսկ չեզոքացնելով հայ ժողովրդի քաղաքական համախմբման հնարավորությունը: Եվրոպայում եղած վաճառա-կանների «ազատ» և «նյութական բարեկեցության» մասին չափազանցեցված պատմությունները մի կողմից, Հայաստանում տիրող անկայուն վիճակն էլ մյուս կողմից կարծես լիցք հաղորդեցին հայերի ձուլման երևույթներին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի կողմից հայ վաճառական խոջաների գործունեության քննությունը Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի երկրների հետ: XVI դարում դեռևս առկա չէին ռուս–իրանական կայուն առևտրական կապեր, սակայն ակնհայտ էր, որ օսմանյան կայսրությունը ամեն կերպ ձգտում էր խաթարել Իրանի և Ռուսաստանի միջև համա-գործակցությունը, որը շահերի միասնության հիմքի վրա կարող էր ձևավորել

---

[1] Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ա.հատ., Երևան, 1964, էջ 153:

[2] Тураев Б.А., Из истории армяно-абиссинских отношений, СПб, 1912, с.5.

[3] Լեո, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Երևան, 1986, էջ 153:

[4] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 59-60:

հակաթուրքական դաշինք։ Հայերը Մոսկովյան պետության հետ առևտուր էին անում շատ վաղուց։ Ինչպես նկատում է Լ. Խաչիկյանը, Ռուսաստանի տնտեսական կյանքում հայերի ունեցած զգալի դերի մասին կարելի է դատել Մոսկվայի կենտրոնում Իվան Ահեղի կողմից կառուցված Վասիլի Երանելու տաճարի եկեղեցիներից մեկը Հայոց Լուսավորիչ Գրիգոր Պարթևին նվիրելու հանգամանքով։ Վերջինս այդ փաստի մեջ տեսնում էր հայերին սիրաշահելու խորհուրդ[1]։

Խոսելով Ռուսաստանում տարբեր երկրների հայ գաղթօջախներից, ինչպես նաև Արևմտյան Հայաստանից ժամանած հայ վաճառականների դերի մասին, Բայբուրդյանը մեջբերում է Կոստոմարովի այն նկատառումը, թե Ռուսաստանում հայ վաճառականների նշանակալից առևտրի մասին վկայում է նաև «Հայկական քարավանատան(տան)» առկայությունը։

Ռուսաստանի հետ հայերի առևտրա–տնտեսական հարաբերությունների մեջ առանձնակի տեղ էր գրավում Աստրախանը, որտեղ հանգուցավորվում էին հարավի և հյուսիսի միջազգային ապրանքաշրջանառության ճանապարհները։ Վոլգա – Կասպյան ճանապարհը, իր բոլոր անհարմարություններով հանդերձ, շատ ավելի կարճ էր, ուստի «հյուսիսային ճանապարհի» բացումից հետո եվրոպական գրեթե բոլոր առաջատար պետությունները սկսեցին եռանդուն ջանքեր գործադրել, որպեսզի ստանան ռուսական պետության վրայով Իրանի հետ առևտրի մենաշնորհը։ Սակայն բոլոր այդ փորձերը ձախողվեցին։ Ցարական կառավարությունը հետևականորեն վարում էր Ռուսաստանում եվրոպական առևտրական կապիտալի սահմանափակման քաղաքականություն, լավ հասկանալով, որ հզոր արևմտյան երկրների առևտրական գործունեության ազատությունը անխուսափելիորեն կհանգեցնի դեռևս թույլ ռուսական առևտրական կապիտալի թուլացմանը։ Հայերի պարագայում, ինչպես նշում է Վ.Բայբուրդյանը, անկախ այն փաստից, որ XVII դ.– ի վերջին երկու տասնամյակների ընթացքում հայ վաճառականների առևտուրը վերը նշված ճանապարհով ձեռք բերեց շոշափելի ծավալ, այնուհանդերձ առևտրական այդ ուղին հայ վաճառականների համար չունեցավ վճռական նշանակություն։ Նախկինի պես իրանա–եվրոպական առևտրի գլխավոր ուղին անցնում էր օսմանյան կայսրության վրայով։ Ռուսաստանը հանձն առավ ինքնուրույն հաստատել անմիջական առևտրական–քաղաքական հարաբերություններ, որում անժխտելի է հայ վաճառականների շոշափելի դերը։ Վերջիններիս նախաձեռնությամբ և գործադրած եռանդուն ջանքերի շնորհիվ Կասպ – Վոլգյան առևտրական ճանապարհը ձեռք բերեց միջազգային առևտրական ուղու նշանակություն և Ռուսաստանը հնարավորություն ստացավ անմիջական առևտրա–տնտեսական հարաբերությունների մեջ մտնել Իրանի, Անդրկովկասի և նրանց վրայով նաև Արևելքի այլ երկրների հետ։ Թվում էր, թե ռուս–իրանական բանակցությունների ժամանակ քննարկման կարևորագույն նյութ պետք է դառնար նաև ընդհանուր թշնամու՝ օսմանյան

[1] Խաչիկյան Լ.Ս., Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բանբեր Մատենադարանի», հ13, Երևան, 1980, էջ 83։

Թուրքիայի դեմ երկու պետությունների հարձակողական–պաշտպանողական ռազմաքաղաքական դաշինք կնքելու հարցը, սակայն շահական կառավարությունը զերծ մնաց այդ քայլից՝ մտավախություն ունենալով, որ Ռուսաստանի ազդեցությունը հնարավոր է տարածվեր նաև Դաղստանի վրա և ռուսները կարող էին կապեր հաստատել Վրաստանի և Հայաստանի դավանակից ժողովուրդների հետ: Թուրքիայի դեմ ռազմական դաշնակիցներ գտնելու հարցում Շահ Աբբաս I-ը ավելի շատ փորձում էր դաշնակիցներ գտնել արևմտաեվրոպական պետությունների շրջանում՝ լայնորեն օգտագործելով նաև հայ բանագնացներին*: Ռուս–իրանական առևտրական կապերի չխզման գործում ևս մեծ է եղել արևելահայ, առավելապես ջուղահայ վաճառական խոջաների դերը: 1660թ. Սպահանից Մոսկվա ժամանած «Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության» ներկայացուցիչ խոջա՝ Զաքար Շահրիմանյանը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվիրում է հայ վարպետների կողմից պատրաստված նշանավոր «աղամանդյա գահը» և բազմաթիվ այլ արժեքավոր նվերներ, որոնց թվում նաև ջուղահայ հայտնի նկարիչ Թանդրիվերանի (Բոգդան Սալթանով) «Խորհրդավոր ընթրիք» նկարը: Մատուցելով այդ թանկարժեք նվերները՝ Շահրիմանյանը ոչ միայն կատարում էր Իրանի հարաբերությունները Ռուսաստանի հետ կարգավորելու դիվանագիտական հանձնակատարի դեր, այլև ցանկանում էր ցուցադրել հայկական առևտրական ընկերության մեծ հնարավորությունները: Ընդ որում «ստանձնելով միջնորդի և դիվանագիտական հանձնակատարի դեր, հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներն առաջնորդվում էին ոչ միայն իրենց առևտրատնտեսական շահերով, այլև հետապնդում էին նաև քաղաքական շահեր, մասնավորապես օսմանյան լծից Հայաստանի ազատագրման նպատակներ»[1]:

Հարկ է նկատել, որ Մոսկվայում ենթադրում էին, որ ռուս վաճառականները գանձարանի համար չեն կարող ապահովել այնպիսի եկամուտներ, որ ի վիճակի էին բերել հայ վաճառականները, ուստի 1667թ.–ին, իսկ ապա 1673թ.–ին մոսկովյան պետության հետ կնքվեց պայմանագիր, որով Ռուսաստանի հետ հայ վաճառականների պատահական կապերը փոխարինվեցին առևտրական ամուր, տևական ու ծավալուն հարաբերություններով, և երբ 1689թ.–ին ռուսական կառավարությունը բոլոր արևելյան վաճառականներին արգելեց Ռուսաստանի

* Շահ Աբբաս I-ից հետո նրա հետնորդները չշարունակեցին եվրոպական տերությունների հետ հակաթուրքական ռազմական դաշինք կնքելու բանակցությունները, քանի որ միանգամայն որոշակիորեն ուրվագծվում էր այն ճշմարտությունը, որ Եվրոպայի մեծ պետությունները իրենց առևտրական շահերից ելնելով մերձավորարևելյան քաղաքականության մեջ շատ հաճախ դրսևորում էին թրքամետ ձգտումներ (այդ մասին տես՝ И.А.Смирнов, Россия и Турция в 16 и 18 в.в., М., 1946, Վ.Բայբուրդյան, Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 180):

[1] Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 188-189:

վրայով առևտուր անել արևմտաեվրոպական երկրների հետ, բացառություն արվեց միայն «Հայկական առևտրական ընկերության» անդամների համար։

Պետերբուրգի հիմնադրումից հետո Պետրոս Ի-ի նվիրական իղձն էր մետաքսի և արևելյան այլ ապրանքների տարանցիկ առևտուրը իրականացնել նաև նոր մայրաքաղաքի վրայով։ Հայերին այդ գործընթացին մասնակից դարձնելու համար նա վերջիններիս շնորհում էր ամեն տեսակի արտոնություններ և իրավունքներ՝ խստիվ պատվիրելով նեղություն և արգելք չհարուցել, անօրինական մաքսագանձումներ չկատարել նրանց նկատմամբ։ Ավելին, Ռուսաստանի հետ առևտուր անող վաճառականներին ապահովում էին փոխադրամիջոցներով, ուղեկցողներով, կացարաններով, պահեստներով և հողակտորներով[1]։ Ուշագրավ է, որ ռուսական մետաքսագործության առաջնեկը հանդիսացող Թերքի գործարանը 1710թ–ին հիմնադրվել է հայազգի վաճառականի կողմից։ Ավելի ուշ մեկ այլ հայ վաճառական Մանուել Իսախանովի հիմնադրած առևտրական ընկերությունը ստացավ Իրանի հետ առևտուր անելու ողջ մենաշնորհը և ամենակարևորը՝ այդ ընկերությունը առաջինն էր Ռուսաստանում, որ հիմնված էր փայատիրական սկզբունքների վրա։

* * *

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հայ վաճառականների առևտրական հարաբերությունները Լեհաստանի հետ։ 1475 թ–ին թուրքերի կողմից Կաֆան քաղաքի գրավման և հայերի զարհուրելի կոտորածի հետևանքով մոտ 45 հզ.հայեր արտագաղթում են հայրենիքից, որոնցից մի մասը Լեհաստան։ Թեև լեհահայերի զբաղմունքները բազմազան էին, այնուհանդերձ հիմնական բնագավառը առևտուրն ու արհեստներն էին։ Լեհահայ վաճառականների ձեռքին էր գտնվում Արևելքի հետ կատարվող գրեթե ողջ առևտուրը։ Ինչպես նշել է Լիննիչենկոն, առանց որևէ չափազանցության կարելի է հաստատել, որ հարավային Ռուսիայի ամենահռչակված առևտրական կենտրոնները, ինչպիսիք են՝ Լվովը, Լուցկը, Կամենեց–Պոդոլսկը, իրենց հարստությամբ, փարթամությամբ և նշանակությամբ մեծավ մասամբ պարտական են առանձնապես հայերին։ Այս ճարպիկ, աշխույժ և ընդունակ ամենայն ձեռներեցությանց ժողովրդի շնորհիվ էր հատկապես, որ հարավային ռուսաց առևտրական կենտրոնները միջնորդ դարձան Արևելքի և Արևմուտքի վաճառականության միջև։ Ծանոթ լինելով կյանքի պայմաններին Արևելքում, տեղյակ արևելյան լեզուներին, քաջ ճանաչելով հաղորդակցության ճանապարհները Արևելքում, օժտված անձնական քաջությամբ և զենք շարժելու վարժ ունակությամբ, վտանգավոր ուղեգնացություններ կատարելու հմտությամբ, հայերը շատ հին ժամանակներից ձեռնամուխ եղան ցամաքային առևտրին Արևմուտքի և Արևելքի միջև, իսկ իտալական գաղութների անկումից հետո Ղրիմում, բոլոր վաճառականությունը նոքա իրանց հաջողակ

[1] Арутюнян П.Т., Тер-Авакимова С.А., Акопян В.А., Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб.документов/А.Р.Иоаннисян.- Ер., т2, ч1, 1964, с.VII.

ձեռքը ձգեցին[1]։ Երբ Լեհաստանի տարածքում դեռ գործում էր արևմուտքից ընդօրինակած «ընդհանուր իրավունքը», լվովահայերը լեհական թագավորին ներկայացրեցին «Հայկական օրենսդրությունը» (1519թ), որը չափազանց կարևոր դեր խաղաց լեհահայերի իրավա-քաղաքական վիճակը սահմանելու գործում, դրանով ստանալով նաև դատական ինքնավարություն։ Հատկապես Լվովում և Լյուբլինում հայ վաճառականներն ունեին խոշոր գրասենյակներ, որոնք իրականացնում էին միջնորդական բնույթի առևտրական գործառնություններ Լեհաստանի և Ռուսաստանի, Լեհաստանի և Թուրքիայի և այլ արևմտյան պետությունների միջև։ Եվ ընդհանրապես, «արհեստն ու արևելյան առևտուրը» - մեջբերելով Զակշևսկա-Դուբասովային գրում է Բայբուրդյանը, - կարող էին զարգանալ միայն հայ արհեստավորների օգնությամբ[2]։ Արևելյան մի շարք ապրանքներ Լվովում անվանում էին «հայկական ապրանքներ», ինչպես օրինակ՝ գորգերը, տարատեսակ զենքերը, ոսկե և արծաթե սպասքը, գինին, չամիչը, ձեթը և այլն։ Ոչ պատահականորեն, ըստ լեհ պատմաբանների, հայերի ներկայությունը լեհական քաղաքներում հարստացրեց երկիրը ոչ միայն նյութական, այլև մշակույթի արժեքներով։

Հետաքրքրական են նաև Հնդկաստանի, հեռավոր Արևելքի և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների հետ հայերի ունեցած առևտրական կապերը։

XV դարավերջին Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործումը բավականին բարդ կացության մեջ էր դրել երկրի մոտ 30 գաղթօջախներում հիմնված, առևտրով և արհեստներով զբաղվող հայ վաճառականներին։ Հայ խոջաները գիտակցում էին, որ ծովային ճանապարհների վրա իրենք չեն կարող մրցակցել հզոր առևտրական ու ռազմական նավատորմեր ունեցող երկրների հետ, որոնցից մեկը Անգլիան էր, որը 1615թ-ին Սուրաթի մոտ ջախջախիչ պարտության մատնելով պորտուգալական «անպարտելի արմադային» դարձել էր արևելյան աշխարհամասի հիմնական քաղաքական գործոնը։ Հասկանալով, որ իրենց ուժը ցամաքային, իրենց հավասար մրցակից չունեցող քարավանային առևտրի մեջ է, հայ վաճառականները դիմեցին բոլոր հնարավոր ու անհնար միջոցներին, պահպանելու համար Իրանի մետաքսաբեր շրջանների ողջ մետաքսի գնման ու արտահանման մենաշնորհային իրավունքը։ Ըստ որոշ հավաստի աղբյուրների 1619թ-ի սեպտեմբերի 14-ին Շահի կողմից կազմակերպված մետաքսի արտահանման իրավունք ստանալու աճուրդին բոլոր եվրոպական ու արևելյան վաճառականների մեջ միայն ջուղայեցի խոջաները յուրաքանչյուր հակ (36 բաթման) մետաքսի համար առաջարկեցին 50 թուման

[1] Լիննիչենկո Ի.Մ., Լեհաստանի և արևմտյան – հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894, էջ 3 (մեջբերումը կատարված է ըստ Վ.Բայբուրդյանի, էջ 226-227)։

[2] Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, էջ 230։

ոսկի*: Այդպիսով Շահը չեղյալ է հայտարարում անգլիացիների հետ կնքած պայմանագիրը և ջուղահայ վաճառականներին հանձնում իրենց բաղձալի մենաշնորհը: Ըստ էության խոջաների կիրառած առևտրական դեմպինգի քաղաքականությունը տվեց իր արդյունքները: Արձանագրենք, որ հաղթանակ տանողը հայ խոջաներն էին, պետականությունից զուրկ մի ժողովրդի ներկայացուցիչներ, որոնք ընդամենը մի քանի տարի առաջ պոկվել էին իրենց բնօրրանից և բռնի տեղահանվել դեպի Իրանի խորքերը: Արևմուտքի երկրների օրինակով, նրանք միավորում էին իրենց կապիտալները և ստեղծում հզոր առևտրական ընկերություններ, որոնք պայմանագրեր էին կնքում եվրոպական մեծ տերությունների հետ: Այսպիսով ջուղայեցիները դառնում են Շահի առանձնաշնորհյալ իրավունքով օժտված վաճառականներ: Ըստ էության «Իրանի արտաքին առևտուրը ամբողջապես գտնվում էր հայերի ձեռքում, որոնք հանդիսանում էին թագավորի ու մեծամեծերի գործակատարները» և շարունակում, թե «Ջուղայեցիները, Իրանի թագավորի համար այն են, ինչ ջենովացիները Իսպանիայի թագավորի համար, առանց թագավորի նրանք չեն կարող ապրել, ոչ էլ թագավորը առանց նրանց»:[1] Դեռ ավելին, Օստ-հնդկական ընկերության ղեկավարությունը իր աշխատակիցներին խորհուրդ էր տալիս սովորել հայերեն, հայերի առևտուր անելու ձևերը և այլն: Նույնիսկ անգլիացիներին հանձնարարվում էր այդ նպատակով բնակվել նոր Ջուղայի հայ խոջաների տներում:

Հայ վաճառականները օգտվում էին Հնդկաստան տանող ինչպես ծովային, այնպես էլ ցամաքային ճանապարհներից: Նրանք Կասպից ծովով գնում էին դեպի Խորասան, այնտեղից քարավաններով մեկնում Ղանդահար և Քաբուլ, իսկ այնուհետև Դելի՝ այդպիսով հանդիսանալով կապող օղակ Պարսից ծոցից դեպի Հնդկական օվկիանոս տանող առևտրական կենտրոնների ու Լևանտյան առևտրական հանգույցների միջև: Ըստ որոշ տեղեկությունների մեծահարուստ խոջաները նավարկում էին իրենց սեփական նավատորմով՝ բաղկացած մեծամասամբ ոչ մեծ առագաստանավերից, որոնք վերին աստիճանի շարժունակ էին, արագընթաց և ունեին բավարար բեռնատարողություն: Հայ վաճառականները չէին սահմանափակվում միայն Հնդկաստանի ծովափնյա քաղաքների առևտրով: Գանգես գետի վրայով նավերով նրանք թափանցում էին երկրի խորքերը: Ա. Ալպոյաճյանը իրավմամբ նկատում է, թե «Եվրոպացիք հայ վաճառականի ոտքին հետքերուն հետևելով է, որ միայն կրցած են առաջանալ»[2]:

Նոր Ջուղայի վաճառականները սկսեցին մասնագիտանալ հնդկական առևտրում: Տեղական արտադրության բազմապիսի ապրանքների հետ մեկտեղ,

---

* Հարկ է նշել, որ անգլիացիներին, մետաքսի արտահանման մենաշնորհից հրաժարվելու նպատակով, խոջաները որպես ազդու զենք օգտագործեցին հում մետաքսի գների կտրուկ բարձրացման քաղաքականությունը:

[1] Այդ մասին տես՝ Բայբուրդյան Վ., նշվ.աշխ., էջ 245:

[2] Ալպոյաճյան Ա., պատմություն հայ գաղթականության, հատ.գ.Կահիրե, 1961, էջ 304:

նրանք ձեռք էին բերում հումք, տալիս այն մանելու, գործելու և ապա արտահանում։ Ըստ էության, հայ վաճառականները զբաղվում էին ձեռնարկատիրական գործունեությամբ։ Հնդկական առևտուրը վերին աստիճանի եկամտաբեր էր հայ վաճառականության համար։ Օրինակներ կան, որոնցից երևում է, որ նոր-ջուղայեցի վաճառականները իրենց գործունեության ընթացքում հաջողում էին կուտակել միլիոնների հասնող մաքուր եկամուտ։

1688թ.-ին Սուրաթ քաղաքում բրիտանական Օստ-հնդկական ընկերության և Հնդկաստանում առևտուր անող ջուղայեցի վաճառականների միջև ստորագրվեց պայմանագիր։ Հարկ է նշել, որ հայ վաճառականների կողմի ներկայացուցիչ Փանոս Քալանթարին, ի նշան երախտագիտության, տրվեց թանկարժեք քարերի առևտրի մենաշնորհը՝ արգելելով թե անգլիացիներին և թե այլ օտարերկրացիներին զբաղվելու նշված ապրանքների առ ու վաճառքով։ Բացի դրանից ջուղայեցիները ստացան բրիտանական հպատակներին համահավասար իրավունքներ։ Նրանք կարող էին ձեռք բերել տներ, անշարժ և շարժական գույք, ընկերության իրավասության տակ գտնվող ցանկացած քաղաքում և ավանում, ազատ էին իրենց դավանանքի, հավատքի մեջ և կարող էին ընտրվել քաղաքական պաշտոններում։ Հարկերը ու տուրքերը հայերի համար սահմանվում էին նույնքան, որքան անգլիացիների համար։ Ավելին, եթե նահանգապետերը կամ ընկերության որևէ պաշտոնատար անձ խախտեր պայմանագրի որևէ կետ, խանգարելով հայերին օգտվելու իրենց տրված արտոնություններից և իրավունքներից, նա պետք է պատժվեր, անգամ մինչև պաշտոնից հեռացումը։ Ընկերությունը պատրաստ էր իր միջոցներով հայկական եկեղեցիներ կառուցել այն բոլոր վայրերում, որտեղ ապրում էին քառասունից ավել հայեր։ Փոխարենը հայերը պարտավորվում էին հնդկական ապրանքները արտահանել միայն անգլիական ճանապարհներով, այսինքն Աֆրիկայի շուրջը ծովային ճանապարհով և բացառապես անգլիական նավերով, ինչը ապահովագրում էր հայերին ծովահենների հարձակումներից։ Անգլիացիները վարում էին հայերին գրավելու քաղաքականություն, որը տևեց մինչև այն պահը, երբ վերջիններիս առևտրատնտեսական և քաղաքական տիրապետությունը Հնդկաստանում վերջնականապես ամրապնդվեց և իրողություն դարձավ։ Անգլիան այլևս չցանկացավ գաղութային առևտրից ստացված բարձր եկամուտները կիսել հայերի հետ։ Ինչպես նկատում է Բայբուրդյանը, անգլիացիները նույնիսկ չէին խորշում կաշառելու տեղական հնդիկ կառավարիչներին ու ֆեոդալներին, որպեսզի նրանք հալածանքների ենթարկեին հայ վաճառականներին։ Նույնանման պատճառներով նմանատիպ վերաբերմունքի հայերը արժանացան նաև ֆրանսիական իշխանությունների կողմից։ Հայ վաճառականների հախուռն դուրս մղումը ասիական շուկաներից մի կողմից ստիպում էր նրանց որոնել և յուրացնել նոր շուկաներ, իսկ մյուս նկատելի էր Մայր Հայրենիքում սեփական շուկա ձեռք բերելու անկասելի ձգտումը։

Այսպիսով XVIIIդ.-ի երկրորդ կեսերին հայ ազատագրական շարժման առաջամարտիկ, հոգևորական դասի հետ մեկտեղ, դառնում է առևտրական բուրժուազիան, որը երազում էր Հայրենիքում ստեղծել քաղաքական վարչակարգ, որն ի վիճակի կլիներ ապահովելու հայ առևտրական կապիտալի շահերը[1]:

XVII դարի հայ վաճառականության մասնակցությունը համաշխարհային առևտրում ոչ միայն հաստատում է աշխարհի առևտրական քարտեզում հայերի ունեցած դերի և ձեռնարկատիրական ոգու կարևորությունը դրամատիրական տնտեսաձևի ձևավորման, այլև, կարևոր նշանակություն է ձեռք բերում, «ժողովուրդների շփման ու փոխհարստացման գործընթացում»[2]:

Գիտական նորույթ: Հոդվածում առաջին անգամ համակարգային վերլուծության է ենթարկվել Վ. Բայբուրդյանի հայացքները՝ համաշխարհային առևտրում հայ վաճառականության դերի վերաբերյալ՝ ներկայացնելով վերջինիս առևտրափոխանակության ոլորտում կուտակած ահռելի փորձը:

Եզրակացություն: Հատկապես XVII-XVIIIդդ.-ում հայ վաճառականությունը իր ուրույն տեղը գրավեց համաշխարհային առևտրի պատմության մեջ: Պետականությունից զուրկ մի ժողովրդի ներկայացուցիչներ, որոնք պոկվել էին իրենց բնօրրանից և բռնի տեղահանվել, նշանակալի ներդրում են ունեցել մի շարք երկրների նյութական և հոգևոր բարօրության առումներով:

Հայ վաճառականները կապեր էին հաստատում եվրոպական և այլ պետությունների կառավարող շրջանակների հետ՝ ամենուր արժանանալով ճանաչման ու դրվատանքի: Նրանք չկորցրեցին իրենց հայկականությունը՝ մասնակից դառնալով հայ ազատագրական շարժումներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աշխարհաժողով/Կոստանդ Ջուղայեցի; Աշխատասիրությամբ Ս. Բալդարյանի, Եր., Մատենադարան, 2021, 216 էջ: https://arar.sci.am/dlibra/publication/296856/edition/272408/content
2. Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ա. հատ., Երևան, 1964, 423 էջ:
3. Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հատ Բ., Կահիրե, 1955,722 էջ:
4. Աղախանյան Հ.Հ., Հայ վաճառականության դերը առօրեական մտածողության զարգացման գործում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (128), Երևան 2009թ., էջ 108-121, Հ. Հ. Աղախանյան, Հայ վաճառականության դերը ժողովուրդների շփման ու փոխհարստացման գործընթացում,«Բանբեր Երևանի համալսարանի», 1 (124), Երևան 2008թ., էջ 176-185:

[1] Ашрафян К.З., К вопросу о просветительском течении среди представителей армянского купечества в Индии и стран Среднего Востока, Москва, 1972, с. 155.

[2] Այդ մասին տես՝ Աղախանյանը Հ.Հ., Հայ վաճառականության դերը ժողովուրդների շփման ու փոխհարստացման գործընթացում, Բանբեր Երևանի համալսարանի, 1 (124), Երևան, 2008թ., էջ 176-185:

5. Բայբուրդյան Բ., Համաշխարհային առևտուրը և հայ վաճառականությունը XVII դարում, Երևան, 2023, 299 էջ:
6. Լեո, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Երևան, 1986, 672 էջ:
7. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, 695էջ:
8. Адонц Н., Из истории армянского вопроса, Научно-инфорационный бюллетень сектора Научной информации АН Армении, серия 3, Ереван, 1984, 48 с.
9. Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIIIвв., т.2, 2006, 672 с.
10. Очерки истории Италии, 476-1918 годы/ред. М.А.Гуковский, Москва, 1959, 390 с.
11. Пирен Ж., Открытие Аравии, Пять веков путешествий и исследований, Москва, 1970, 359с.
12. Смирнов И.А., Россия и Турция в 16 и 18 в.в., М., 1946, 158с.
13. Bakhchinyan A., Regional Routes, regional roots? Cross-Border. Patterns of Human Mobility in Eurazia, Hokkaido Slavic-Eurasian Research Center, 2017, p.23-29.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ

Լիանա Կառլենի Հարությունյան

Համառոտագիր. Արդիականությունն ու նպատակը. Պատմական իրադարձությունների բերմամբ՝ Հայության մի ստվար հատված 17-րդ դարի սկզբին հայտնվեց այլ ափերում: Սովորելով լեզուներ, բանկային ու վարկատվական փոխատվության ձևեր, ուսումնասիրելով տեղի կենցաղն ու սովորույթները հայերը հանդես էին գալիս իբրև աշխարհիկ և հոգևոր գործունեության ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչներ: Լայն էր հայ վաճառականության քարտեզը՝ Եվրոպա, Ռուսաստան, Հնդկաստան և այլուր:

Վայելելով մեծ հեղինակություն նրանց հաջողվում է տարբեր գաղթօջախներում ստեղծել իրենց շուկաները, զուտ հայկական(ազգային) առևտրական տները, անգամ Ազգային Սահմանադրություն ու հայկական օրենսդրությունը, նրանք հիմնադրում են տպարան՝ հայերեն ամեն տեսակի գրքեր հրատարակելու իրավունքով: Խոջայական կապիտալը իրավմամբ ծառայում էր ոչ միայն առևտրի ընդլայնմանը, այլև մտավոր գործին՝ հրատարակելով կրոնական ու աշխարհիկ բնույթի բազմաթիվ գրքեր, քարտեզներ, տեղեկատուներ: Անթիվ ու անհամար ճանապարհորդությունները նպաստել էին նրանց գիտական, հասարակական-քաղաքական,փիլիսոփայական պատկերացումների ձևավորմանը: Հ.Հ.Աղախանյանի պատկերավոր բնորոշմամբ, ինչպես մեղուն ծաղիկներից նեկտար հավաքելիս զուգահեռաբար, իր կամքից անկախ նաև փոշոտում է ծաղիկները,

բնության կարգի ու շարունակականության պահպանման տեսանկյունից գուցե շատ ավելի կարևոր գործ անելով, նմանապես և հայ վաճառականը իր տեղափոխած ապրանքներով, սեփական կենսակերպով, վարքուբարքով օբյեկտիվորեն նպաստում էր բարքերի փոփոխությանն ու մտածողության զարգացմանը:

Այս առումով հայ վաճառականության գործունեության քննությունը **նպատակ** ունի ցույց տալու հայերի էական դերակատարությունը համաշխարհային առևտրում՝ դրանով իսկ նպաստելով գլոբալացման արդի դարաշրջանում հայկական ինքնության պահպանմանը:

Խնդիր է դրվել ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի հայ վաճառականների գործունեությունը ինչպես տնտեսական, այնպես էլ մտածողության տեսանկյունից, վեր հանել նրանց դերը տարբեր «ժողովուրդների շփման ու փոխհարստացման տեսանկյունից»:

Մեթոդաբանություն: Որպես շարադրման սկզբունք ընտրվել է պատմա-քննական վերլուծության մեթոդը:

Գիտական նորույթ: Հոդվածում առաջին անգամ համակարգային վերլուծության է ենթարկվել Վ. Բայբուրդյանի հայացքները՝ համաշխարհային առևտրում հայ վաճառականության դերի վերաբերյալ՝ ներկայացնելով վերջինիս առևտրափոխանակության ոլորտում կուտակած ահռելի փորձը:

Բանալի բառեր. Համաշխարհային տնտեսություն, վաճառականություն, տնտեսական աշխուժացում, առևտրա-տնտեսական հարաբերություններ, միջնորդ, ազգային-մշակութային էվոլյուցիա, համագործակցություն, ապրանքաշրջանառություն, մրցակցություն, մենաշնորհ, դեմպինգ:

МИРОВАЯ ТОРГОВЛЯ И АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО В XVII ВЕКЕ

Лиана Карленовна Арутюнян

Аннотация: Актуальность и цель статьи. В силу исторических событий в начале 17 века внушительная часть армянства оказалась на других берегах. Изучая языки, виды банковских и кредитных передач, местный быт и обычаи, армяне выступали как представители различных сфер мирской и духовной деятельности. Карта армянской торговли была обширна: Европа, Россия, Индия и другие страны.

Пользуясь большим авторитетом, они умудрялись создавать в разных колониях свои рынки, чисто армянские (национальные) торговые дома, Национальную конституцию и армянское законодательство, учреждают типографию с правом издания всевозможных книг на армянском языке. Капитал купечества по праву служил не только расширению торговли, но и интеллектуальной деятельности, издавая множество книг, карт, справочников. Бесчисленные путешествия способствовали формированию их научных,

общественно-политических и философских идей. По образному определению Г.Г.Агаханяна, подобно тому, как пчела собирает нектар с цветов, независимо от своей воли, она также опыляет цветы, выполняя, возможно, гораздо более важную работу с точки зрения поддержания порядка и непрерывности природы, подобно армянским купцам, которые перевозом своих товаров, своим образом жизни и своим поведением, объективно способствовали трансформации нравов и развитию мышления.

Задачи. Была поставлена задача представить деятельность армянского купечества данного периода, как с точки зрения экономики, так и мышления, выделить их роль с точки зрения коммуникации и взаимообогащения разных народов.

Методология. Применен метод историко-критического анализа.

Научная новизна. В статье впервые подвергнуты систематическому анализу взгляды В. Байбурдяна на роль армянского купечества в мировой торговле, представлен огромный опыт, накопленный последними в области торгового обмена.

Ключевые слова. Мировое хозяйство, купечество, экономическое оживление, торгово-экономические отношения, посредник, национально-культурная эволюция, кооперация, товарообращение, конкуренция, монополия, демпинг.

WORLD TRADE AND ARMENIAN MERCHANTS IN THE 17TH CENTURY

Liana Karlen Harutyunyan

Abstract. Relevance and purpose of the article. Conditioned by the historical events at the beginning of the 17th century, many Armenians found themselves on foreign shores. By studying languages, forms of lending, local life, and customs, Armenians penetrated the various spheres of secular and spiritual activities. The map of Armenian trade was extensive: Europe, Russia, India, and other countries. Having great authority, Armenians managed to create their own markets, purely Armenian (national) trading houses, the National Constitution, and Armenian legislation in different colonies, and establish a printing house with the right to publish all kinds of books in the Armenian language. The capital of the merchants rightfully served not only for the expansion of trade, but also for intellectual activities, publishing many religious and secular books, maps, and reference books. Countless travels contributed to the formation of scientific, socio-political, and philosophical ideas of Armenian merchants. According to the figurative definition of G.G. Agakhanyan: just as a bee collects nectar from flowers, regardless of its will, it also pollinates flowers, performing perhaps much more important work from the point of view of maintaining order and continuity of nature, like the Armenian merchants who by transporting their goods, their way of life and

their behavior, objectively contributed to the change (transformation) of morals and the development of thinking.

The problem. In the scope of the article, an attempt was made to present the activities of the Armenian merchants of the period, both from the economic and cognitive point of view, to highlight the role of Armenian merchants in the context of the point of view of communication and mutual enrichment of different nations.

Scientific novelty. In the article, for the first time, V. Baiburdyan's views on the role of Armenian merchants in world trade were subjected to a systematic analysis, presenting the enormous experience accumulated by the latter in the field of trade exchange.

Keywords: World economy, merchant class, economic revival, trade and economic relations, intermediary, national and cultural evolution, cooperation, commodity circulation, competition, monopoly, dumping.